# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ info@charentsavan.am

## ՈՐՈՇՈՒՄ

**«26» ապրիլի 2013 թվականի N 206**

**ՊԱՏՃԵՆ**

## ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի ***Աստղիկ Սարգսյանի*** 2013 թվականի ապրիլի 10-ի թիվ 654/11 դիմումը, Չարենցավանի քաղաքապետին կից բնակարանային հարցերով հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 22-ի թիվ 03 նիստի արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ***Աստղիկ Սարգսյանին և իր ամուսնուն՝ Գառնիկ Ղազարյանին***, ճանաչել Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի 10-րդ շենքի թիվ 38 բնակարանի վարձակալ և տալ համաձայնություն վերոնշյալ հասցեում նրանց հաշվառմանը:

2. Հանձնարարել ***«Կոունկ»*** համատիրությանը՝ ***Աստղիկ Սարգսյանի և իր ամուսնու՝ Գառնիկ Ղազարյանի*** հետ կնքել բնակելի տարածության սպասարկման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

***Իսկականի հետ ճիշտ է:***

***Աշխատակազմի քարտուղար- Ծ. Սարգսյան***